12593

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար

Համբարձում Մաթևոսյան

«10» 11 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 262 - 25

Նախաձեռնող՝ ***Երևանի քաղաքապետարան***
ք. Երևան, Արգիշտի 1

Գործունեությունը՝ ***Իսակով-Արշակունյաց ճանապարհային հանգույցի կառուցում***
ք. Երևան

Առդիր՝ 10 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 262 - 25

« 10 » 11 2025թ.

Իսակով-Արշակունյաց ճանապարհային հանգույցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	Երևանի քաղաքապետարան
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ /Ա կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Երևան քաղաքի Կենտրոն, Շենգավիթ, Մալաթիա Սեբաստիա վարչական շրջաններ

Ներածական մաս. Երևանի քաղաքապետարանը նախատեսում է Իսակով-Արշակունյաց ճանապարհային հանգույցի կառուցում Երևան քաղաքի վարչական տարածքում: Ճանապարհի ծրագծի հիմնական մասը՝ (մոտ 1.2 կմ), անցնում է Կենտրոն վարչական շրջանով, մյուս հատվածը՝ (մոտ 0.7 կմ), անցնում է Շենգավիթ վարչական շրջանով, փոքր հատվածը՝ (մոտ 761մ), գտնվում է Մալաթիա Սեբաստիա վարչական շրջանում:

Նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Ա կատեգորիայի գործունեության տեսակ՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի 10-րդ կետի «գ» ենթակետի:

Իսակով-Արշակունյաց ճանապարհային հանգույցի իրականացումը ֆինանսավորվում է Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) Բազմափուլային ֆինանսավորման գործիքի (ԲՖԳ) միջոցով՝ քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի (ՔԿԶՆԾ) շրջանակներում:

Նախատեսվող ծրագիրը մշակվել է կայուն, ինտեգրված և տնտեսապես արդյունավետ քաղաքային տրանսպորտի համակարգի ստեղծմանը խթանելու նպատակով, հետևաբար ուղղված է բարելավելու քաղաքային տրանսպորտի համակարգը Երևանում: Նախագծի իրականացումը կնպաստի երթևեկության, տրանսպորտի բարելավմանը, Երևանի կենտրոնի բեռնաթափմանը նոր հուսալի և արդյունավետ շրջանցիկ ճանապարհի կառուցման միջոցով:

Կառուցվող ճանապարհի ծրագիծը հիմնականում անցնելու է պետական, համայնքային, որոշ հատվածում մասնավոր սեփականության հողերով, որոնց նպատակային և գործառնական նշանակությունները բնակավայրերիի, բնակելի կառուցապատման, ընդհանուր օգտագործման,

հասարակական և խառը կառուցապատման, գյուղատնտեսական՝ պտղատու այգիներ, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության՝ արդյունաբերական օբյեկտների և անտառային են:

Նկարագրական մաս. Իսակով-Արշակունյաց ճանապարհային հանգույցի կառուցումը կապելու է Իսակովի և Արշակունյաց պողոտաները: Արշակունյացի հատվածը գտնվում է Շենգավիթ վարչական շրջանում: Այս հատվածը կսկսվի Արշակունյաց պողոտայից և կշարունակվի մոտ 170 մ, կհասնի Հրազդան գետի կամրջին: Հրազդան գետի կամրջի հատվածը կսկսվի ՊԿ 0+170-ից և կավարտվի ՊԿ 0+440-ում: Կամրջի երկարությունը կլինի մոտ 270 մ:

Իսակովի հատվածը գտնվում է Կենտրոն՝ մասամբ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում: Ծրագիրը ներկայացված է մոտավորապես 6.6 կմ երկարությամբ, երկկողմանի երթևեկելի մասով, կենտրոնական բաժանիչ գոտիով և մայթերով, նոր ծրագծի (մոտ 2.0 կմ) վրա կառուցվող քաղաքային ճանապարհից և Հրազդան գետի վրայով անցնող կամրջի 28 մ երկարությամբ երկաթբետոնե հեծաններով: Ճանապարհը նախագծվում է որպես ներքաղաքային ճանապարհ/փողոց՝ 60 կմ/ժ առավելագույն արագությամբ:

Նախատեսված է, որ ճանապարհահատվածի հիմնական մասը կունենա 6 (3 x 2) երթևեկության գոտիներ, յուրաքանչյուրը՝ 3.30-3.75 մ լայնությամբ և 4.00 մ լայնությամբ կենտրոնական բաժանիչ գոտի: Այնուամենայնիվ, որոշ հատվածներում այն ենթակա է որոշ փոփոխության: Ավարտված ճանապարհի մակարդակը կարող է հասնել գոյություն ունեցող մակարդակից մինչև 12.6 մ բարձր, միջինում բարձրությունը կլինի մինչև 1 մ:

Ծրագիրը ներառում է հետևյալ բաղադրիչները.

-Իսակովի պողոտայի հանգույց՝ գոյություն ունեցող Իսակովի պողոտայի հանգույցը նախատեսվում է մասնակի ձևափոխել, դարձնելով երեքնուկի տերևի տեսքով,

-Արշակունյաց պողոտայի հանգույց՝ օվալաձև հանգույց, որը կկապի Իսակով – Արշակունյաց ճանապարհային հատվածը և Արշակունյաց պողոտան, կկառուցվի ստորգետնյա անցում՝ Արշակունյաց պողոտայի երթևեկության հոսքերի համար,

-Նորագյուղ թաղամասի հանգույց – նախատեսված է Էջմիածնի հին խճուղին և Իսակով Արշակունյաց ճանապարհային հատվածը զրոյական մակարդակում միմյանց կապելու համար, հիմնական ճանապարհի համար կկառուցվի երկաթբետոնե թռիչքային կառուցվածք՝ վրայով անցնելու համար, իսկ Էջմիածնի հին խճուղին Իսակովի պողոտային կմիանա թռիչքային կառուցվածքի տակով:

-Նախագիծը ներառում է նաև 500 մմ տրամագծով նոր կոյուղատար, 27 նոր անձրևահորերի կառուցում և հետիոտնային ուղեանց՝ Արշակունյաց պողոտայում:

Նոր ճանապարհի ծրագիծը կկառուցվի այնպիսի ստանդարտներով, որոնք թույլ կտան ունենալ բարելավված ճանապարհային գծանշումով, ազդանշանային համակարգով, անվտանգությամբ, ջրահեռացման համակարգով, ջրթող խողովակներով և կողնակներով ճանապարհ:

Ծրագրի կառուցվածքային տարրերը նախագծվել են հաշվի առնելով տարածաշրջանի սեյսմիկ ակտիվության բարձր ռիսկայնությունը: Նախագծային լուծումներում հաշվի են առնվել նաև ջրահեռացման կազմակերպման հարցերը՝ ջրի հոսքերը վերահսկելու, հողերի ողողաքայքայումը և տեղանքում հեղեղումները նվազագույնի հասցնելու համար:

Ծրագիրը տեղակայված է չոր և կիսաչոր տարածքում (Իսակովի կողմից մոտ 1.2 կմ), ուստի նախագիծը ներառում է կանաչապատում ճանապարհի բաժանիչ գոտում և կողնակների

երկայնքով (ծառերի տնկում, ճիմապատում), ինչը կբարելավի օդի որակը ճանապարհի օտարման գոտում և մերձակա տարածքներում: Ակնկալվում է, որ տեղանքում օդի որակը կբարելավվի նաև երթևեկության խցանումների նվազման պատճառով: Ճանապարհի օտարման գոտու երկայնքով նախատեսվում է նոր կոյուղատարի իրականացում՝ հաշվի առնվելով ապագա ընդլայնված քաղաքին ծառայելու դրա հնարավորությունները:

Ճանապարհի նոր ծրագիծը պահանջում է Կոմիտասի անվան զբոսայգու՝ անմիջապես օտարման գոտում գտնվող պատերի, մետաղական ցանկապատերի և սյուների մի մասի ապամոնտաժում: Ապամոնտաժված ցանկապատը կրկին 187 մ երկարությամբ և 2,5 մ բարձրությամբ վերաշարվելու է իր նախկին տեսքով՝ համաձայն 901.30 տեխնիկական մասնագրի պահանջների:

Շինարարական աշխատանքները տիպիկ են ճանապարհների և կամուրջների կառուցման նախագծերի համար և ընդհանուր առմամբ հետևյալն են.

- գոյություն ունեցող շինությունների ապամոնտաժում,
- հանույթի/հողային աշխատանքներ,
- լիցքի իրականացում,
- Հրազդան գետի վրայով մոտ 270 մ երկարությամբ նոր կամրջի կառուցում,
- երեքնուկի տերևի տեսքով հանգույց/ օվալաձև հանգույց/ ուղեանցներ /մոտեցման իջատեղեր,
- հաղորդուղիների տեղահանում՝ ներառյալ բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծերը,
- ասֆալտե ծածկի իրականացում,
- ջրահեռացման համակարգի կառուցում,
- արտաքին լուսավորություն,
- ճանապարհային նշանների տեղադրում, գծանշում, պաստառներ և արգելափակոցներ,
- կանաչապատում՝ ներառյալ ոռոգման համակարգը,
- աղմկապաշտպան պատնեշների կառուցում:

Ճանապարհների կառուցման շինարարական աշխատանքների համար օգտագործվող նյութերն են.

- լիցքի նյութ՝ կոպիճ և ավազ, հողային և ժայռային հանույթ,
- բետոն,
- ասֆալտ,
- մետաղական ամրաններ կառուցվածքների համար,
- մետաղական կառուցվածքներ և կցամասեր,
- ջուր՝ տեխնոլոգիական (տոփանում) և բնապահպանական (փոշու առաջացումը կանխարգելելու համար) նպատակներով,
- այլ (խողովակներ, լուսավորություն, պաստառներ և պողպատե արգելափակոցներ, ներկեր, քսանյութեր և այլն):

Շինարարական բոլոր նյութերը ձեռք են բերվելու պաշտոնապես գրանցված մատակարար կազմակերպություններից:

Ծրագիրը նախատեսում է մեծ ծավալով հողային աշխատանքների իրականացում, քարքարոտ վերին հողաշերտի մաքրում, բուսաշերտի առանձնացում, հողային հանույթ և տեղափոխում: Հողային աշխատանք սկսելուց առաջ հողի վերին բերրի շերտը /ծավալը գնահատվում է մոտ 11100 մ³/ հանվելու է և պահպանվելու է ՀՀ օրենսդրությամբ պահանջվող նորմերին համապատասխան:

Ժամանակավոր կուտակումն իրականացվելու է ծրագրի օտարման գոտում կամ քաղաքապետարանի, վարչական շրջանի, մասնավոր սեփականատիրոջ հետ համաձայնեցված տարածքներում՝ բացառելով բուսահողի որևէ կորուստ և հետագայում օգտագործվելու է իրականացվելիք կանաչապատման աշխատանքների համար:

Նախագծի համաձայն շինարարության համար անհրաժեշտ է լինելու 44678.07 մ³ խիճ և 13365.39 մ³ կոպճավազային խառնուրդ: Լիցքի համար անհրաժեշտ քարերը, կոպիճը, ավազը և այլ նյութեր (լիցքի աշխատանքների ընդհանուր ծավալը գնահատվում է 125781.73 մ³), ինչպես նաև ասֆալտը և բետոնը գնվելու են պայմանագրային հիմունքներով՝ գրանցված հանքերից և գործարաններից:

Փոշենստեցման համար անհրաժեշտ տեխնիկական ջուրը շինհրապարակ նախատեսվում է բերել ավտոցիստերներով, որի բերման աղբյուրը հետագայում կհստակեցվի շինարարության կապալառուի կողմից:

Ճանապարհամերձ հատվածների բարեկարգման նպատակով նախագծում նախատեսվում է իրականացնել կանաչապատման հետևյալ աշխատանքները.

- ծառերի տնկում՝ 765 հատ,
- թփերի տնկում՝ 67 հատ,
- կանաչապատման համար ոռոգման համակարգ՝ ներառյալ պլաստիկ խողովակները, պոմպերը, փականները և միացումները, ինչպես նաև էլեկտրական հաղորդալարերի միացումները պոմպին/շարժիչին՝ անկախ պահանջվող երկարությունից- 20,465.00 գծ մ,
- կենտրոնական բաժանիչ գոտու և ծածկի եզրերում հողային պաստառի ջրահեռացում 4,000.00 գծ մ, ծածկից մինչև 1 մ խորության վրա dn=150 մմ ծակոտկեն խողովակի տեղադրում,
- ավազային անկողնակ,
- ցամաքուրդային հետլիցք,
- ինժեների կողմից հաստատված տեսակի գեոտեքստիլի (GOST 33068) տեղադրում,
- դիտահորերի տեղադրում (լրակազմ, 100 մ հեռավորությամբ),
- անհրաժեշտ բոլոր կցամասերի, միացումների և այլ մասերի տեղադրում,
- Ճմապատում՝ 24088.00 մ²
- հողի բերրի շերտով ծածկում և սերմի ցանքս՝ 23452.00 մ², որի համար կպահանջվի 11726 մ³ բուսահող:

Նախատեսվող կանաչապատման աշխատանքերի համար անհրաժեշտ բուսահողի ձեռքբերումը, տեղափոխումն ու օգտագործումը կիրականացվի << գործող օրենսդրության պահանջներին համապատասխան՝ նախապես համաձայնեցնելով տեղական ինքնակառավարման մարմինների հետ:

Ոռոգման ցանցերի նախագիծը մշակված է ըստ պատվիրատուի (ԵՔ) առաջադրանքի, ճանապարհաշինական գծագրերի և գեոդեզիական հանույթի՝ համապատասխան գործող նորմերի: Ջրի պահանջվող քանակն ընդունված է.

- 1մ² սիզամարգի համար՝ 5լ/օր,
- 1մ² սիզամարգ ծառատունկով՝ 10լ/օր:

Ոռոգումը նախատեսված է Արշակունյաց պողոտայի և նախագծվող ճանապարհի խաչմերուկների ՊԿ 0+00 - ՊԿ2+40 հատվածներում (մինչև էստակադա), որը կիրականացվի Φ50 պոլիեթիլենային խողովակով: Ոռոգման աղբյուր է հանդիսանում գոյություն ունեցող քաղաքային ոռոգման ցանցը՝ ЭЦВ6-4-10-Q=1.4 լ/վրկ H=40 մ պարամետրերով պոմպով

ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

(համաձայնեցված է ԵՔ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի հետ:

Ոռոգման ենթակա մյուս հատվածը ՊԿ 4+91.66-ից մինչև Իսակով-Մոնթե Մենքոնյան հանգույցն է: Այս հատվածն ընդգրկում է փողոցի 4 մ լայնությամբ և 1368 մ երկարությամբ բաժանարար գոտին, որտեղ նախատեսվում է ծառատունկ՝ փողոցի երկայնքով, շեպերի վրա, Իսակով-Մոնթե Մելքոնյան խաչմերուկի (հանգույցի) հարակից տարածքներում: Առավելագույն ծախսը այս հատվածում կազմում է 54,73 մ³/օր: Բաժանարար հատվածի ոռոգումը նախատեսված է ջրման ծորակներով, իսկ շեպերը և մնացած տարածքները՝ անձրևիչներով:

Տվյալ հատվածի սնման աղբյուր է հանդիսանում մոտ 120 մ հեռավորության վրա գտնվող քաղաքային ոռոգման ցանցը: Նախատեսվում է տեղադրել նոր պոմպ /CR64-2-2A-F-A-E HQ QE/ Q=16լ/վրկ, H=30 մ, N=7 կվտ Grundfos մոդելի, որը կմոնտաժվի գոյություն ունեցող պոմպակայանում: Նախատեսվում է տեղադրել պոլիէթիլենային Φ160-Φ40 մմ խողովակներ 0,4 ից 0,5 մ խորության վրա: Ոռոգման համակարգի հետագա շահագործման ժամանակ ոռոգման պարբերականությունը և տևողությունը կկարգավորվի բոլոր ճյուղերի վրա նախատեսված փականներով:

Կառուցված ճանապարհի շահագործման ընթացքում հնարավոր բարձր աղմուկը մեղմացնելու համար կառուցվելու են աղմկապաշտպան 4 պատնեշներ, որոնց տեղադիրքը որոշվում է աղմուկի մոդելավորման հետազոտության հիման վրա:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացած թափոնները կարող են ընդգրկել.

- շինարարության համար ոչ պիտանի հող և ժայռային նյութ,
- շինարարական թափոններ՝ մետաղ, պլաստիկ, փայտի կտորներ, բետոնե ապամոնտաժված մասեր և այլն,
- հին ճանապարհային ծածկի հեռացումից առաջացած ասֆալտի թափոններ,
- հեղուկ թափոններ՝ բետոնաջրի, յուղերի, վառելանյութերի, քսայուղերի մնացորդներ,
- կենցաղային թափոններ:

Շինարարության համար ոչ պիտանի նյութերը տեղափոխվելու են Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված վայր:

Նախագծման փուլում միջազգային մասնագետի կողմից 2021թ.-ի հունվարի 18-ից մինչև հունվարի 19 իրականացվել են աղմուկի և թրթռումների ակուստիկ հետազոտություն՝ ծրագրային տարածքի աղմուկի մակարդակի ֆոնային (ելակետային) տվյալները հավաքագրելու և ճանապարհի ակուստիկ ազդեցությունը մոդելավորելու նպատակով: Հետազոտության ընթացքում աղմուկը չափվել է ծրագծի երկայնքով 3 կետերում: Արդյունքները համեմատվել են և ելակետային իրավիճակում բնակելի հատվածում (կետեր NM1 և NM 3) աղմուկը չի գերազանցում սահմանված ստանդարտներին: Սակայն Արշակունյաց պողոտային մոտ գտնվող NM2 կետում գերազանցում է արձանագրվել: Քանի որ մոդելավորման արդյունքներով սպասում է գերազանցում աղմկապաշտպան պատնեշների կառուցման անհրաժեշտություն է առաջանում: Նախագծով նախատեսվում է ակուստիկ պատնեշների կառուցում, ինչն նվազացնելու է աղմուկի մակարդակը: Աղմկապաշտպան պատնեշ տեղադրելու նպատակը աղուկն առնվազն 30 դԲ(A)-ով նվազեցնելն է:

Թրթռումների առողջության ստանդարտներն /սանիտարական նորմը/ ապահովելու համար ԲԿՊ-ում նախատեսվում է թրթռումների արագացման մակարդակի գործիքային չափագրումների պահանջ ինչպես շինարարության, այնպես էլ թեքությունների վերացման ժամանակահատվածի համար: Այս միջոցառումները պետք է իրականացվեն Կապալառուի

կողմից: Կապալառուն պետք է իրականացնի իր սեփական չափագրումները շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն 21 օր առաջ: Կապալառուն պատասխանատու կլինի իրականացնելու գործիքային կանոնավոր չափագրումներ (ամսական երկու անգամ, ինչպես նաև բողոքների առկայության դեպքում):

Թրթռումների մակարդակի ուժգնությունը չափագրումներն իրականացվելու են 6 կետերում՝ ծրագրի մոտակայքում գտնվող բնակելի տան մոտ: Կատարված չափագրումների տվյալների հիման վրա մոդելավորման միջոցով որոշվել են դրանց հնարավոր ազդեցությունները շինարարական աշխատանքների ընթացքում շենք շինությունների վրա: Առաջարկվել են միջոցառումներ, որոնք ընդգրկվել են ԲԿՊ համապատասխան բաժիներում:

Ծրագրի տարածքում մակերևութային ջրային մարմիններն են Հրազդան գետը և ստորին Հրազդանի ոռոգման ջրանցքը: Իսակով - Արշակունյաց ճանապարհային հանգույցի առաջարկվող ծրագրի համար ՇՄԱԳ շրջանակում նախկինում իրականացվել է հետազոտություն՝ ջրի որակի ֆոնային վիճակն արձանագրելու համար: Նմուշառումը կատարվել է 2 կետում՝ մեկը գետից, մյուսը ոռոգման ջրանցքից՝ ֆոնային վիճակը որոշելու համար: Յուրաքանչյուր ջրային մարմնից մեկ նմուշառման կետը համարվել է բավարար, քանի որ կամրջի սկզբի և վերջի կետերի միջև դեպի նշված ջրային օբյեկտները ներհոսքի աղբյուրներ չկան: Շինարարության հետ կապված ազդեցությունը որոշելու համար Կապալառուն պարտավորված է լինելու իրականացնել կանոնավոր նմուշառում և չափումներ ընդհանուր առմամբ 4 կետում՝ 2-ը Հրազդան գետից և 2-ը ոռոգման ջրանցքից՝ կամրջի աշխատանքների իրականացման վայրից 50 մ հոսանքն ի վեր և 50 մ հոսանքն ի վար:

Գետի ձախ ափի մեջտեղում առկա է բաց ջրատար, որի պատերը հիմնականում վնասված են: Նույն ջրատարը ծառայում է որպես կոյուղի՝ լանջին խիտ կառուցված տների համար: Խողովակներից արտահոսքը, տեղումները, ձնհալքը, ջրահեռացման համակարգի բացակայությունը մեծապես նպաստում են ստորերկրյա ջրերի մակարդակի բարձրացմանը: Ազդեցությունն այստեղ ավելի հավանական է և աղտոտումը նվազագույնի հասցնելու մեղմացման միջոցառումները նախատեսված են: Մակերևութային և ստորգետնյա ջրերի պաշտպանության պլանում:

Հնարավոր է վառելանյութի, յուղի (հիդրավլիկ, փոխանցման տուփ, շարժիչ և այլն) քսանյութերի և այլ հեղուկ նյութերի և թափոնների արտահոսք կամ հոսակորուստ: Նման կարգի աղտոտումը կառավարելի է և ԲԿՊ-ով նախատեսված են մեղմացնող միջոցառումներ, այդ թվում. գործող տեխնիկայի տեղում սպասարկման դեպքում՝ վառելանյութի ճիշտ և անվտանգ պահեստավորում, տեխնիկական սպասարկման համար հատուկ մեկուսացված տարածքների հատկացում թույլատրված վայրերում, բաց անպաշտպան գրունտի վրա տեխսպասարկման աշխատանքների բացառում, ցանկացած արտահոսքի մաքրում:

Ծրագրի շինարարական աշխատանքների հետևանքով հողային ռեսուրսների վրա ազդեցությունը գնահատվում է աննշան: Թեև շինարարական աշխատանքների փուլում, ինչպես նաև ճանապարհի հետագա շահագործման ընթացքում վառելիքի, յուղի (հիդրավլիկ, փոխանցման տուփ, շարժիչ և այլն) քսայուղերի և այլ հեղուկ նյութերի արտահոսքով հողի աղտոտման որոշակի վտանգ կա, այնուամենայնիվ ազդեցության խստությունը գնահատվում է ցածր, քանի որ նախատեսված են անհրաժեշտ միջոցառումները՝ ուղղված հնարավոր ազդեցությունների նվազմանը/կանխմանը: Այնուամենայնիվ, շինարարական աշխատանքների ընթացքում հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար կանոնավոր մեղմացնող միջոցառումներ են նախատեսվում ԲԿՊ-ում:

Հրազդան գետի ափամերձ տարածքում բուսականությունը փոխվում է և բաղկացած է թփերից և մանր ծառերից (շուրջ 0,3 կմ): Բոլոր տարածքները հետազոտվել են «Կենդանական և բուսական աշխարհի հետազոտության» շրջանակում: Կենսաբազմազանության փորձագիտական հետազոտության իրականացման, ինչպես նաև շինարարական աշխատանքներին խոչնդոտող ծառերի տեսակներն ու քանակները որոշելու համար 2020 թվականի հոկտեմբերին իրականացվել է բուսական և կենդանական աշխարհի ուսումնասիրություն: Ուսումնասիրության նպատակն է եղել պարզել կարևոր տեսակների հավանական առկայությունը դիտարկվող տարածքում: Կարմիր ցուցակում ընդգրկված, վտանգված և/կամ էնդեմիկ տեսակների առկայությունը որոշվել է հատուկ մեթոդաբանությամբ՝ բաժանելով տարածքը 2 հիմնական մասի՝ կիսաանապատային հարթավայրի և Հրազդան գետի ափամերձ հատվածի: Ընդհանուր 415 ծառ և 67 թուփ ենթակա է հեռացման: Շինարարությանը խոչնդոտող կտրվող ծառերի, թփերի և բների տրամագծերը ցանկը ըստ տեսակների ներկայացված է ՇՄԱԳ հաշվետվությունում: Արշակունյացի հատվածում ընդհանուր առմամբ գրանցվել է 120 ծառ, այդ թվում՝ 63 ծառ Կոմիտասի անվան զբոսայգում: Իսակով-Նորագյուղ հատվածում գրանցվել է 40 ծառ, Հրազդանի կիրճում՝ 255: Ծառերի չափսերը խիստ տարբեր են՝ 3-4 սմ-ից (երիտասարդ ակացիաներ) մինչև 58-67 սմ (թեղի և սոսի):

Ըստ բուսականության հետազոտության արդյունքների՝ Ծրագրի տարածքում կարմիրգրքային բուսատեսակներից աճում է սոսի արևելյանը (Platanus orientalis L.), որը Կարմիր գրքում նշված է որպես «Վտանգված տեսակ»: Արշակունյաց փողոցի եզրամասում կտրվելու են Platanus orientalis տեսակի 9 ծառ, իսկ Հրազդան գետի ափամերձ տարածքում՝ 6 ծառ: ՀՀ բույսերի Կարմիր գրքում նշված այլ հազվագյուտ կամ էնդեմիկ տեսակներ, որոնք ունեն հատուկ պահպանության նշանակություն, տեղանքում չեն հայտնաբերվել:

Ծառերի քանակը որոշվել է նախնական գնահատմամբ, սակայն դրանց թիվը կարող է կրճատվել շինարարական աշխատանքների ընթացքում, հնարավոր է որ դրանցից շատերը չհատվեն և պահպանվեն: Դա կախված է կամրջի հենարաններից կամ պատվանդաններից և դրանց շուրջը կատարվող աշխատանքներից: Այսպիսով, բուսականության մաքրման աշխատանքներն սկսելուց առաջ հատվող ծառերի ու թփերի քանակը կվերահաշվարկվի կապալառուի կողմից և ծառերի կառավարման պլանը համապատասխանաբար կթարմացվի:

Կենդանական աշխարհի հետազոտությունն իրականացվել է 2020թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին՝ դաշտային այցերի եղանակով (սեպտեմբերի 23, 24, 26 և 27-ին): Հետազոտվել են 2 հիմնական տարածքներ՝ կիսաանապատային հարթավայրը և Հրազդան գետի ափամերձ տարածքը: Կիրառվել են միջատաբանական հետազոտությունների ավանդական մեթոդներ, որոնց թվում՝ հավաք միջատաբանական ցանցով, հնձում խոտերի և թփերի վրայով, ճյուղերի թոթափում, հավաք քարերի տակից, ձեռքով հավաք, կենդանի ծառերի հին կոճղերի և քայքայման տարբեր փուլերում մահացած կոճղերի ստուգումներ և այլն: Նյութերը հավաքվել են ճանապարհի ծրագծի, ջրային մարմինների ափերի, տափաստանային դաշտերի հողերի և այլ տարածքներից: Ստուգվել են նաև միջատներով պոտենցիալ վարակված ծառերի և խոտերի որոշ չորացած հատվածներ (ճյուղեր, ցողուններ, արմատներ): Քանի որ այցերն իրականացվել են համեմատաբար ուշ ժամանակաշրջանում և որոշ տեսակների հասուն առանձնյակներն այլևս չէին հանդիպում, հավաքվել են դրանց նույնականացման մնացուկները:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ЦЕНТР ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ ծրագրի ազդեցության տարածքում ՀՀկառավարության 14.08.2008 թ.-ի «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N967-Ն որոշմամբ գրանցված բնության հուշարձաններ առկա չեն:

Շինարարական աշխատանքների ընթացքում վնասակար նյութերի արտանետումներն առաջանալու են հանույթի, բեռնման աշխատանքների, ծածկի իրականացման, գծանշումների և սարքավորումների շահագործման հետևանքով: Շինարարական տեխնիկան նույնպես աղմուկի և թրթռումների առաջացման հիմնական աղբյուր է: Շինարարության ընթացքում շրջակա միջավայրի վրա կանխատեսվող արտանետումների ազդեցությունը գնահատելու համար իրականացվել է օդի որակի մոդելավորում՝ օգտագործելով հատուկ «Էռա» ծրագիրը: Շինարարության ընթացքում օդի որակի պարամետրերին համապատասխանությունն ապահովելու համար ԲԿՊ-ում փոշու, ծծմբի երկօքսիդի (SO2) և ազոտի երկօքսիդի (NO2) արտանետումների պարբերական գործիքային չափագրումների պահանջ է նախատեսված ինչպես շինարարության, այնպես էլ թերությունների վերացման ժամանակահատվածում: Ծծմբի երկօքսիդի (SO2) և ազոտի երկօքսիդի (NO2) չափագրումները կիրականացվեն կապալառուի կողմից երկու անգամ՝ առաջին անգամ նախքան շինարարական աշխատանքները սկսելը (21 օր առաջ), երկրորդ անգամ՝ մինչև թերությունների վերացման ժամանակահատվածի ավարտը: Շինարարության ընթացքում լրացուցիչ միջանկյալ չափագրումներ կիրականացվեն տեղի բնակիչների կողմից գրանցված բողոքների դեպքում:

Կապալառուն պատասխանատու կլինի իրականացնելու փոշու՝ 2.5 PM և 10 PM մասնիկների գործիքային կանոնավոր չափագրումներ (ամսական երկու անգամ, նաև ԱՄ-ներից բողոքներ ստանալու դեպքում) և արդյունքների ու դրանց վերլուծությունների վերաբերյալ ներկայացնել հաշվետվություններ՝ համեմատելով դրանք ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգավորումների և ՄՖԿ (IFC) ստնադարտների հետ՝ ըստ PM2.5-ի և PM10-ի հետևյալ առավելագույն թույլատրելի կոնցենտրացիաների:

Փոշու չափագրումներն իրականացվելու են 3 ընտրված կետերում, աշխատանքային ժամերի ընթացքում, յուրաքանչյուր կետում առնվազն 3 անգամ, որի հիման վրա որոշվելու է միջին ցուցանիշը: Կետերն ընտրվելու են խիտ բնակեցված տարածքներում՝ մոտ գտնվող զգայուն ընկալիչների սկզբունքի հիման վրա: Չափիչ սարքը տեղադրվելու է մոնիթորինգի պլանում որոշված զգայուն ընկալիչների մոտ (շենքից դուրս)՝ վերջիններիս վրա ազդեցությունը որոշելու համար:

Նախագծով ընդհանուր առմամբ կանաչապատվելու է 47540 մ² տարածքը, որից նախատեսված է 24088 մ² ճիմապատել, իսկ մնացած 23452 մ² ծածկել բուսահողաշերտով:

Ծրագրի շրջանակներում նախատեսվող շինարարական աշխատանքները կունենան ժամանակավոր բացասական ազդեցություններ շրջակա միջավայրի վրա, որոնք տիպիկ են փոքր և միջին չափի ճանապարհների կառուցման համար: Ակնկալվում է, որ շինարարական աշխատանքների բացասական ազդեցությունը կլինի ժամանակավոր և կկրի տեղային բնույթ, այսինքն՝ կսահմանափակվի շինարարական աշխատանքների իրականացման ժամանակահատվածով և շինհրապարակներով:

ՇՄԱԳ ընթացքում ուսումնասիրվել են ծրագրի ազդեցությունները և իրականացվել է մեղմացնող միջոցառումների և դրանց մոնիթորինգի պլանավորումը ԲԿՊ-ում ըստ ծրագրի զարգացման փուլերի: Մոնիթորինգ իրականացվելու է ինչպես շինարարական աշխատանքների փուլում, այնպես էլ հետշինարարական փուլում՝ թերությունների վերացման ժամանակաշրջանում:

Ծրագրի շրջանակներում իրականացվել է շրջակա միջավայրի հնարավոր տնտեսական վնասի, ինչպես նաև հատվող ծառերի/ թփերի հատման հետևանքով բնությանը հասցվող վնասի գնահատում: Համաձայն հաշվարկի՝ շինարարական աշխատանքների արդյունքում շրջակա միջավայրի որակին հասցված տնտեսական վնասը կկազմի 208 283 938 ՀՀ դրամ, իսկ հատվող ծառերի/ թփերի վնասը՝ 6 296 000 ՀՀ դրամ: Վնասի փոխհատուցումը հատուցման վճարների տեսքով իրականացվելու է օրենքով սահմանված կարգով, ինչպես նաև վնասի փոխհատուցման միջոցառումների տեսքով:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ փորձաքննության գործընթացում Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի նստավայրում անցկացված հանրային լսման ընթացքում նախատեսվող գործունեության իրականացումը տեղական ինքնակառավարման մարմնի և հանրային լսման մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության կոմիտեները, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանը:

Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակված տարբերակում:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմերի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Մինչև գործունեության իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, ստանալ համապատասխան համաձայնությունները և թույլտվությունները /ներառյալ ջրօգտագործումը, ջրահեռացումը, հողերի գործառնական նշանակության փոփոխությունը, գոյություն ունեցող ենթակառուցվածքների տեղափոխումը, թափոնների, այդ թվում ասֆալտի, հեռացումը, վերամշակումը, տեղափոխումը և այլն/:
2. Գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտ է ղեկավարվել առողջապահության նախարարի 2012 թ. սեպտեմբերի 19-ի № 15-Ն և 2002 թվականի մարտի 6-ի №138 հրամաններով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:
3. Գործունեությունն իրականացնելիս անհրաժեշտ է առաջնորդվել՝ «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքի /2000թ./, «Բուսական աշխարհի մասին» ՀՀ /1999թ./ օրենքի պահանջներով, ինչպես նաև՝ ՀՀ կառավարության՝ 14.08.2008թ. №967-Ն 31.07.2014թ. №781-ն, 29.01.2010թ. «ՀՀ Բուսերի և կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» №71-Ն և №72-Ն որոշումների պահանջներով:
4. Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի՝ «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող

հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»

5. Ճանապարհի ազդեցության գոտում գտնվող՝ Կոմիտասի անվան զբոսայգու մետաղական ցանկապատերի, սյուների ապամոնտաժման և վերաշարման աշխատանքներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ մշակույթի նախարարության գործառույթների և ընթացակարգերին համապատասխան:

6. Շինարարական հրապարակների տեղադրման, հողաբուսաշերտի ժամանակավոր պահեստավորման, հանվող գրունտի և շինարարական աղբի հեռացման տարածքները և վայրերը իրականացնել Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարների հետ համաձայնեցված:

7. Անհրաժեշտ է մշակել Կանաչապատման, բարեկարգման և արդիականացման նախագիծ՝ համաձայնեցնելով Երևանի քաղաքապետարանի հետ: Ծառատնկման աշխատանքներն անհրաժեշտ է իրականացնել «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանության» ՀՈԱԿ-ի մասնագետների հետ համաձայնեցված /պահպանելով 3-5 տարի խնամքի և կպչողականության ապահովման միջոցառումներ/:

8. Շինարարության ընթացքում անհրաժեշտ է ապահովել ԲԿՊ-ում և բնապահպանական մոնիթորինգի պլանում առաջարկվող միջոցառումների և մոնիթորինգային դիտարկումների իրականացումը և ժամանակացույցերը, որոնց արդյունքները պետք է հասանելի լինեն պետական շահագրգիռ մարմիներին և հանրությանը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Իսակով-Արշակունյաց ճանապարհային հանգույցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Հովիկ Մեսրոպյան